**ՀԱՎԵԼՎԱԾ**

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ**
**2014թ. հունվարի 21-ի**
**N 3 -Ա ՈՐՈՇՄԱՆ**

# ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2010-2013 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

**ԿԱՊԱՆ 2014**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ
2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
3. ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ
4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ
   - 4.1. Կրթություն
   - 4.2. Մշակույթ, սպորտ և երիտասարդություն
   - 4.3. Առողջապահություն
   - 4.4. Սոցիալական պաշտպանություն, երեխաների իրավունքների պաշտպանություն
5. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ
6. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ
7. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ
8. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
   - 8.1. Տարածքային կառավարում
   - 8.2. Տեղական ինքնակառավարում
   - 8.3. Քաղաքացիական հասարակություն

# 1.ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

| | |
|---|---|
| ԱԱՌ | Ազգային անվտանգության ռազմավարություն |
| ԱԱՀՀՀ | Առավել աղքատ համայնքների համալիր հետազոտություն |
| ԱԽ | Աշխատանքային խումբ |
| ԱՄԳ | Աղքատության մասնակցային գնահատում |
| ԱՎԾ | Ազգային վիճակագրական ծառայություն |
| ԳԷՖ | Գլոբալ էկոլոգիական ֆոնդ |
| ԵՄ | Եվրամիություն |
| ԿԶԾ | Կայուն զարգացման ծրագիր |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՀԿ | Հասարակական կազմակերպություն |
| ՄԱԿ ԶԾ | ՄԱԿ-ի զարգացման ծրագիր |
| ՄԺԾԾ | Միջին ժամկետ ծախսային ծրագիր |
| ՄԱՄՀ | Մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթիվ |
| ՄԱԿ ՀՊԾ | ՄԱԿ-ի համաշխարհային պարենի ծրագիր |
| ՄԶԱՀ | Մարդկային զարգացման ազգային հետազոտություն |
| ՄԶԳ | Միջազգային զարգացման գործակալություն |
| ՄԶՄԿ | Մարդկային զարգացման միջազգային կենտրոն |
| ՄՄՈՒՀ | Միջին մասնագիտական ուսումնական հաստատություն |
| ՄԶԾ | ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր |
| ՄՎ | Մոնիտորինգ և վերլուծություն |
| ՆԴՀ | Նախադպրոցական հաստատություն |
| ՍԾՏԳ | Սոցիալական ծառայության տեղական գրասենյակ |
| ՏԱՊ | 2013 թվականի տարեկան աշխատանքային պլան |
| ՏԻՄ | Տեղական ինքնակառավարման մարմին |
| ՓՄՁ | Փոքր և միջին ձեռնարկություններ |
| ՓՄՁ ԶԱԿ | Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոն |

## 2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2010-2013 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի (այսուհետ Ծրագիր) 2013 թվականի աշխատանքային պլանի հաշվետվությունը կազմվել է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 11.02.2009թ. թիվ 25-Ա որոշմամբ հաստատված Սյունիքի մարզային զարգացման ծրագրի մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խմբի կողմից:

**Ծրագրի ընդհանուր բնութագիրը**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N782-Ն որոշմամբ հաստատվեց Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2010-2013 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը:

ՏԱՊ-ի նպատակներն են.

1) Հնարավոր բոլոր ռեսուրսների համախմբումը ՄԶԾ-ով նախատեսվող 2013 թվականին իրականացվելիք միջոցառումների իրականացման համար
2) Նախատեսվող միջոցառումների շաղկապումը ՄԶԾ-ի արդյունքների հետ՝ «տրամաբանական հենքի» համակարգի օգնությամբ
3) Միջոցառումների իրականացման ցուցանիշների և արդյունքների ներառումը տրամաբանական հենքում
4) Հնարավորության դեպքում միջոցառումների իրականացման ժամկետների՝ ըստ եռամսյակների և դրանց իրականացման համար պատասխանատու կազմակերպությունների սահմանումը
5) Դեռևս ֆինանսական միջոցներով չապահովված միջոցառումների համար ֆինանսավորման ռազմավարությունների սահմանումը:

ՏԱՊ-ի իրագործման ընթացքում ակնկալվում է 2013 թվականի կտրվածքով ստանալ հետևյալ հիմնական արդյունքները.

1) Մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում
2) Բնակչության եկամուտների աճ և մարդկային աղքատության կրճատում
3) Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում
4) Արդյունաբերության զարգացում
5) Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում
6) Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում
7) Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում
8) Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում
9) Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացում
10) Մարզպետարանի կարողությունների ուժեղացում

11) Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում
12) Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդարձակում
13) Հանրային կառավարման համակարգում հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների արմատավորում
14) Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում
15) Տեղեկատվության ազատության աստիճանի բարձրացում:

**Ծրագրի ֆինանսավորումը**

ՄԶԾ իրագործման համար պահանջվող ֆինանսական միջոցները և նրանց ծախսման ուղղությունները գնահատված են՝ պահանջվող ընդհանուր գումարը կազմում է ավելի քան 71.9 մլրդ դրամ, արտարժույթով նախատեսվող ՄԶԾ ֆինանսավորման ծավալները՝ 437.9 մլն ԱՄՆ դոլար և 208.9 մլն եվրո:

2013 թվականի ՏԱՊ-ով նախատեսվել է իրականացնել **36921.1** մլրդ դրամի ծրագրեր: Նշված միջոցառումներից իրականացվել են **38460.5** մլրդ դրամի ծրագրեր:

2013 թվականի ՏԱՊ իրագործման համար նախատեսված միջոցառումների կատարումն ներկայացված է աղյուսակ 9-ում:

ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2013թ. գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի կատարման համեմատականը ներկայացված է աղյուսակ 10-ում:

**Ծրագրի մոնիտորինգի և գնահատման հայեցակարգը**

ՄԶԾ-ն ունի մոնիտորինգի և գնահատման համապարփակ հայեցակարգ, որը բաղկացած է 4 հիմնական բաղադրիչներից.

1) Քաղաքականության ուսումնասիրում
2) ՄԶԾ ցուցանիշների և թիրախների վերանայում
3) Մասնակցային մոնիտորինգ և գնահատում
4) Ազդեցության գնահատում:

**Ծրագրի հաշվետվության կառուցվածքը**

ՄԶԾ միջանկյալ հաշվետվության ոլորտային բաժինների կառուցվածքը բաղկացած է 4 հիմնական բաժիններից.

1) Քաղաքականության վերլուծություն
2) Իրականացման առաջընթացը
3) Խնդիրները
4) Քաղած դասերը և հետագա քայլերը:

Քաղաքականության վերլուծություն: Այստեղ ամփոփվել են ոլորտի համար տարվա կտրվածքով առաջարկված ցուցանիշները և միջոցառումները:

Իրականացման առաջընթացը: Այս բաժնում նշվել են 2013 թվականի ձեռքբերումները և դրանք կապվել ՏԱՊ-ի արդյունքային ցուցանիշների հետ:

Խնդիրները: Այստեղ նկարագրվել է տարվա ընթացքում ծագած յուրահատուկ խնդիրները և խոչընդոտները:

Քաղած դասերը և հետագա քայլերը: Այս բաժինը բացահայտում է հետագա այն խնդիրները, որոնք բյուջեի և պլանավորման գործընթացի հիմքը կհանդիսանան:

# 3.ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

## 3.1 Քաղաքականության վերլուծություն

Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Այս կապակցությամբ ՏԱՊ-ով նախատեսվում է.

1) Աջակցություն մարզի ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրերի իրականացմանը
2) Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն
3) ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն
4) Ուսուցողական աջակցության ծրագիր
5) Ձեռնարկատիրական գործունեությանն առնչվող իրավաօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ մարզի գործարարների շրջանակներում տեղեկատվության տարածման միջոցառումների իրականացում:

Այս նպատակներին հասնելու համար կարևորվում է ՓՄՁ ԶԱԿ-ի Սյունիքի մարզի ներկայացուցչությունների, մարզպետարանի, մարզի խորհրդի, մարզի տեղական ինքնակառավարման մարմինների անմիջական աջակցությունն ու մասնակցությունը գործընթացին:

Կարևոր է շեշտը դնել հատկապես ՓՄՁ աջակցության տարեկան պլանում գյուղական համայնքների շահառուների տեսակարար կշռի մեծացման վրա:

Առաջարկվում է բարձրացնել գործարար ակտիվությունը մարզում բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով՝ ներգրավելով այդ գործընթացներում ՏԻՄ-երին և համայնքների գործարար ներկայացուցիչներին:

## 3.2 Իրականացման առաջընթացը

Մարզում ՓՄՁ ոլորտում իրականացված աշխատանքներն ըստ աջակցման գործիքների և ՓՄՁ սուբյեկտների կարելի է խմբավորել՝

1) ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորության տրամադրման ծրագիր
2) ՓՄՁ սուբյեկտների թողարկվող արտադրանքի, մատուցվող ծառայությունների շուկաներ առաջ մղման աջակցության ծրագիր
3) ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն
4) Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ծրագիր
5) Սկսնակ գործարարների ֆինանսական աջակցության ծրագիր
6) Ուսուցողական աջակցություն
7) Ձեռնարկությունների եվրոպական ցանցի հաղորդակցման կենտրոնի գործունեության շրջանակներում աջակցություն

ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել է 5127.8մլն դրամի վարկ, ինչպես նաև 15.9 մլն դրամ վարկային երաշխավորություն:

**Վարկային ծրագրեր**

2013թ. ընթացքում մարզում բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից՝ փոքր ու միջին բիզնեսի և գյուղատնտեսության զարգացմանը խթանելու նպատակով, տրամադրվել են 5.1 մլրդ դրամի վարկեր:

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս և Մեղրի քաղաքներում իրականացվել է <<Սկսնակ ձեռներեցության աջակցության>> երկու ծրագիր, որին մասնակցել են 41 սկսնակ գործարարներ: Ծրագրի շրջանակներում 2013թ. տրամադրված վարկի գումարը կազմել է 15.3 մլն դրամ:

2013թ. ընթացքում 1258 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն, 2 ՓՄՁ-ի՝ վարկային երաշխավորություններ, 12 սկսնակ գործարարների՝ ձեռներեցության աջակցություն, 41 սկսնակ գործարարների՝ ձեռներեցության աջակցություն, 7 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրում, 8 ՓՄՁ-ի՝ արդյունաբերական համակարգերի կառուցմանն աջակցություն, 47 ՓՄՁ-ի՝ ուսուցողական աջակցություն և 13 ՓՄՁ-ի՝ աջակցություն ձեռնարկությունների եվրոպական ցանցի հաղորդակցման կենտրոնի գործունեության շրջանակներում:

2013 թվականին մարզում ՓՀԷԿ-երի կառուցման և շահագործման նպատակով մասնավոր ներդրողների կողմից իրականացվել են շուրջ 950.0 մլն դրամի ներդրումներ:

### 3.3 Խնդիրները

Մարզում դեռևս ցածր է ՓՄՁ սուբյեկտների տարածաշրջանային ընդգրկվածությունը /ծրագրերում ընդգրկվել են առավելապես Կապանի և Սիսիանի տարածաշրջանի ՓՄՁ սուբյեկտները/:

### 3.4 Քաղած դասերը և հետագա քայլերը

Գոյություն ունեցող խնդիրների առկայության պարագայում ՄԶԾ ՓՄՁ աջակցման ծրագիրը շարունակում է իրագործվել և այս ուղղությամբ զգալի առաջընթաց է արձանագրվել:

ՓՄՁ աջակցման ծրագրի արդյունավետ շարունակությունը կարևոր նախադրյալ կհանդիսանա մարզում մասնավոր հատվածի զարգացման ռազմավարության մշակման համար:

# 4.ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

## 4.1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

### 4.1.1 Քաղաքականության վերլուծություն

Ելնելով մարզում կրթության ոլորտի ներկա իրավիճակից՝ կրթության որակի և մատչելիության բարձրացումը շարունակվում է դիտվել որպես այս ոլորտի զարգացման գերակա նպատակ: 2013 թվականի ընթացքում հատկապես ուշադրություն է դարձվել հանրակրթության համակարգում տեղի ունեցող ինտենսիվ բարեփոխումներին:

Նկատի ունենալով Սյունիքի մարզի տնտեսական ներուժն ու զարգացման միտումները առաջնային է դառնում որակյալ մասնագիտական կրթության հնարավորությունների՝ հատկապես նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթության հնարավորությունների ընդլայնումը:

Լուրջ աշխատանքներ են իրականացվել հատուկ կրթական և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթական համակարգում ինտեգրելու աշխատանքները շարունակելու ուղղությամբ:

Հատուկ ընդհանուր կրթության բնագավառում պետական ռազմավարությունն ուղղվել է մի կողմից հատուկ կրթական հաստատություններում երեխաների կրթության և խնամքի որակի բարելավմանը, մյուս կողմից այլընտրանքային ծառայությունների ձևավորմանը, ինչը հնարավորություն է տալիս աստիճանաբար բեռնաթափել հատուկ դպրոցները: Այս ուղղությամբ լուրջ քննարկումներ են ընթանում մարզային ենթակայության 2 հատուկ դպրոցների հետագա կարգավիճակի, համակարգում ընդգրկված սովորողների կրթական և սոցիալական կարիքի գնահատմանը համաձայն՝ նրանց ուսուցումը համապատասխան ուսումնական հաստատություններում կազմակերպելու համար:

### 4.1.2 Իրականացման առաջընթացը

2013 թվականի ընթացքում շարունակվել է դպրոցների և նախադպրոցական ուսումնական հաստատությունների վերանորոգման, տեխնիկական վերազինման և գույքի թարմացման միջոցառումները, ուսումնական զենքի զետեղարանների կահավորմանն ուղղված աշխատանքները, ուսուցիչների և դաստիարակների մասնագիտական կարողությունների բարձրացման, նախադպրոցական և մասնագիտական կրթության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Հատուկ ուշադրության կենտրոնում է նախադպրոցական կրթություն ստանալու՝ երեխայի իրավունքների ապահովումը: <<Կրթության մատչելիության ապահովում>> ծրագրի շրջանակներում ՀՀ Սյունիքի մարզի 7 հանրակրթական ուսումնական հաստատություններում (դպրոցներում) դրամաշնորհային ծրագրով գործարկվել են նախադպրոցական խմբեր:

Համաշխարհային բանկի վարկային ծրագրի շրջանակներում շարունակվում են ուսուցիչների վերապատրաստման աշխատանքները, մեկ կամ մեկից ավելի թեմատիկ

ուղղվածությամբ: «Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան փետրվար-ամսին իրականացվել են 2012 թվականին վերապատրաստված 430 ուսուցիչների ատեստավորման աշխատանքները: 2013 թվականի հունիսին մարզային ենթակայության 403 ուսուցիչների համար անցկացվել է վերապատրաստման դասընթացներ:

<<Վորլդ Վիժն ինթերնեյշնլ>> ՄԲԿ-ի միջոցների հաշվին կազմակերպվել են դասընթացներ, հանդիպումներ, սեմինարներ հետևյալ թեմաներով.

1) Նորարարական գաղափարները մանկավարժության մեջ, մասնախմբերի աշխատանքը թեմայով դասընթաց: Բազմահամակազմ դասարաններում դասավանդման նոր մեթոդի ներդրման դասընթացներ և խորհրդատվություն (546.2 հազ դրամ)
2) Առարկայական մասնախմբերի աշխատանքը թեմայով դասընթաց (194.2 հազ դրամ)
3) Ծաղկաձորում Սիսիանի հատուկ դպրոցի և Գորիսի գիշերօթիկ դպրոցների հոգեբանների, մանկավարժների և բուժքրոջ համար կազմակերպված դասընթաց (70.0 հազ դրամ)
4) <<Դպրոցի խորհուրդ. առկա իրավիճակի և գործունեության հեռանկարները 2013թ.>> թեմայով աշխատանքային հանդիպում (84.2 հազ դրամ)
5) <<Դպրոցի ֆինանսական միջոցների մասնակցային կառավարում>> թեմայով դասընթաց ՏԶԾ համայնքների ԴԽ, ԾԽ անդամների, դպրոցի տնօրենների և փոխտնօրենների համար (430.4 հազ դրամ)
6) Աշակերտական խորհուրդների նախաձեռնությամբ իրականացվող ծրագրեր և միջոցառումներ, դպրոցների աշակերտական, ծնողական և դպրոցական խորհուրդների կարողությունների զարգացման դասընթացներ և աշխատանքային հանդիպումներ, աշակերտական խորհուրդներին հայտարարված <Լավագույն բլոգ> մրցույթի մրցանակներ և խրախուսական նվերներ (8414.1 հազ դրամ)
7) 65 դպրոցական երեխաների համար վարսահարդարի, խոհարար-դիզայների և խոհարար հրուշակագործի հմտությունների ապահովում/դասընթաց (606.0 հազ դրամ)
8) Աջակցություն երեխաների պաշտպանության օրվա միջոցառումներին /հունիսի 1/- 800.0 հազ դրամ

Իրականացված դասընթացների, հանդիպումների, միջոցառումների, քննարկումների համար հատկացված գումարի արժեքն է 11.145,1 հազ դրամ:

<<Վորլդ Վիժըն Ինտերնեյշնլ>> միջազգային բարեգործական կազմակերպությունը շարունակում է աջակցել հանրակրթական, ինչպես նաև նախադպրոցական ուսումնական հաստատություններին նրանց ուսումնանյութական բազայի հարստացման ուղղությամբ, մասնավորապես.

1) Կապան քաղաքի թ. 2 մանկապարտեզի դահլիճի վերանորոգում (2920.0 հազ դրամ)
2) Կահույքի տրամադրում Կապանի թ. 4, 13 մանկապարտեզներին: Թիվ 2 մանկապարտեզի բեմի համար վարագույրի տրամադրում (1440.0 հազ դրամ)

3) Կապանի թ. 8, 10 և 12 դպրոցների սանհանգույցների վերանորոգում (16113.0 հազ դրամ)
4) Կապանի թ. 6 և թ. 10 դպրոցներում ուսումնական ջերմոցների հիմնում (4182.0 հազ դրամ)
5) Կահույքի և ուսումնական պարագաների տրամադրում տարածաշրջանի դպրոցներին /կարիքների գնահատման հիման վրա/ (1600.0 հազ դրամ)
6) Աշոտավան համայնքի մանկապարտեզի խոհանոցի վերանորոգում (2664,385 հազ.դրամ)

Աղյուսակ 1 Կրթության ոլորտի 2013թ. արդյունքային ցուցանիշները

| Միջոցառման անվանումը | Արդյունքային ցուցանիշը | Թիրախ | Փաստացի |
|---|---|---|---|
| Բարձրացնել կրթական ծառայությունների մատչելիությունը և որակը Սյունիքի մարզում | 1. Համախառն ընդգրկվածությունը հիմնական դպրոցում | 99.5% | 99.5% |
| | 2. Աշակերտ – ուսուցիչ հարաբերակցությունը՝ հանրակրթության բնագավառում | 7:1 | 7:1 |
| | 3. Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցների թիվը | 39 | 39 |
| | 4. 3-6 տարեկան երեխաների նախադպրոցական հաստատություններում ընդգրկվածության տեսակարար կշիռը այդ տարիքի երեխաների ընդհանուր թվում | 46% | 51.35% |
| | 5. Հանրակրթական ծառայությունների որակից աշակերտների և ծնողների բավարարվածության աստիճան | 85% | 93% |
| | 6. ԲՈՒՀ ընդունված դպրոցի շրջանավարտների տեսակարար կշիռը տվյալ տարվա շրջանավարտների ընդհանուր թվաքանակի մեջ | 40% | 63.6% |
| Դպրոցների մարզադահիլիճների և խաղահրապարակների վերանորոգում, մարզագույքով և տեխնիկական պարագաներով հագեցում | Բարեկարգված մարզադահիլճներ և խաղահրապարակներ ունեցող դպրոցների տեսակարար կշիռը | 9.2 % | 9.2 % |
| Ջեռուցման լոկալ համակարգի ներդրում | Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցների տեսակարար կշիռը | 32,5 | 32,5 |
| | Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցներում սովորող աշակերտների թիվը | 11650 աշակերտ | 11650 աշակերտ |

| | | | |
|---|---|---|---|
| Համակարգչային դասասենյակների ստեղծում, համալրում և ինտերնետ կապով ապահովում) | Համակարգչային դասասենյակներ ունեցող դպրոցների թիվը<br>Ինտերնետ կապով ապահովված դպրոցների թիվը | 102<br>114 | 102<br>114 |
| Ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման դասընթացների պարբերաբար կազմակերպում, կրթության օրենսդրության մասին իրազեկում | Որակավորման բարձրացման, մեկ կամ մեկից ավելի թեմատիկ ուղղվածությամբ վերապատրաստման դասընթացների մասնակցած ուսուցիչների թիվ<br>Համակարգչին տիրապետող ուսուցիչների թիվ | 878<br>1220 | 743<br>1270 |
| Ուսուցիչների, երեխաների և ծնողների համար դասընթացների կազմակերպում ուսուցիչ-աշակերտ-ծնող կապը ամրապնդելու նպատակով | Ուսուցիչների, երեխաների և ծնողների համար դասընթացների կազմակերպում /հազ դրամ/ | 90.99 | 90.99 |
| Դասավանդման համագործակցային և մանկավարժական նոր մեթոդների ուսուցում | Մարզի 24 համայնքի նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների դաստիարակների և ուսուցիչների համար ուսուցման նոր մեթոդների վերաբերյալ դասընթացների կազմակերպում և անցկացում /հազ դրամ/ | 785.6 | 400.0 |
| Ուսուցիչների պարտադիր ատեստավորման կազմակերպում «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան | Նախապատրաստական աշխատանքների իրականացում ատեստավորման 1-ին փուլի մասնակից ուսուցիչների համար | 20% | 20% |
| Աշակերտական խորհուրդների անդամների համար դասընթացների կազմակերպում | Մարզի 18 համայնքների դպրոցների աշակերտական խորհրդի անդամների հետ դասընթացների կազմակերպում /հազ դրամ/ | 4350.0 | 507.5 |
| Սոցիալապես անապահով, ծնողազուրկ, բազմազավակ ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում | Մանկական առողջարարական ճամբարներում ամառային հանգստի կազմակերպում /հազ դրամ/ | 11920.0<br>/1670 աշակերտ/ | 10400.0<br>/ 1620 աշակերտ/ |
| Նախադպրոցական հաստատությունների ուսումնանյութական բազայի թարմացում | Կահույքի տրամադրում Կապանի թ.2, 4, 13 մանկ.:Վերանորոգվել է Կապանի թ.2,13,Գորիսի թ1,Շինուհայրի, Անգեղակոթի Աշոտավանի մանկապարտ. վարագույրի տրամադրում, Կապան քաղաքի թ. 2 մանկ. | 49014,540 | 46336,540 |
| Կիրակնօրյա դպրոցի հիմնադրում և աջակցություն | Կապանի, Մեղրիի և Ագարակի կիրակնօրյա դպրոցներին աջակցություն /հազ դրամ/ | 3918.0 | 143.0 |

| | | | |
|---|---|---|---|
| Հանրակրթական ուսումնական հաստատություններում բարեկարգման ծրագրերի, շինարարական վերանորոգման աշխատանքների իրականացում, աշակերտների նախաձեռնությամբ իրականացված ծրագրեր, դիտողական պարագաների տրամադրում, համակարգիչների նվիրաբերում, դպրոցների աջակցության ծրագրերի իրագործում | 1. Կապանի թ. 8, 10 և 12 դպրոցների սանհանգույցների վերանորոգում, Կապանի թ. 6 և թ. 10 դպրոցներում ուսումնական ջերմոցների հիմնում, կահույքի և ուսումնական պարագաների տրամադրում տարածաշրջանի դպրոցներին /կարիքների գնահատման հիման վրա/ | 808460.0 | 21895.0 |
| | 2.<<Վորլդ Վիժըն Ինտերնեյշնլ>> միջազգային բարեգործական կազմակերպության կողմից հանրակրթական ուսումնական հաստատություններին աջակցություն | 13000.0 | 340.4 |

### 4.1.3 Խնդիրները

Չնայած ՀՀ կառավարության կողմից ոլորտում իրականացվող բարեփոխումներին և ձեռքբերումներին, ուսման որակ և մատչելիություն ապահովելու համար դեռևս դանդաղ է ընթանում դպրոցի նյութատեխնիկական բազայի արդիականացման և հագեցվածության գործընթացը, մասնավորապես՝ գյուղական դպրոցների լաբորատոր սարքավորումներով, որակյալ ինտերնետ կապով, կոշտ գույքով ապահովվածությունը:

Դպրոցականների ամառային հանգստի լիարժեք և արդյունավետ կազմակերպման համար խիստ նպատակահարմար է օգտագործել մարզի յուրահատուկ բնակլիմայական և ռեկրեացիոն ռեսուրսները՝ շեշտը հիմնականում դնելով վրանային ճամբարների ստեղծմանը:

Ուսումնական զենքի զետեղարանների (պահասենյակների) <<Զենքի մասին>> ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան ստեղծելու և կահավորելու գործընթացը վերջնական ավարտին հասցնելու նպատակով աշխատանքները շարունակվում են: Մարզի 70 դպրոցների հատկացվել է ուսումնական քիմիական սարքավորումներ:

### 4.1.4 Քաղած դասերը և հետագա քայլերը

Ոլորտի առջև կանգնած խնդիրների լուծումը հրատապ է և պահանջում է լուրջ ֆինանսական միջոցներ:

Դպրոցների ուսումնական զենքի զետեղարանների (պահասենյակների) <<Զենքի մասին>> ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան ստեղծելու և կահավորելու գործընթացը գտնվում է ավարտման փուլում: Այն ավարտին հասցնելու համար պահանջում է ֆինանսական ներդրումներ, որն անհրաժեշտ է իրականացնել բացառապես ՀՀ պետական բյուջեի հաշվին: Առաջիկայում ԿԳ նախարարությանը կներկայացվի մարզի այն դպրոցների ցանկը, որոնք առաջիկա 5 տարիների

ընթացքում ուսումնական զենք ստանալու համար չեն կարող կահավորել զետեղարաններ:

Ոլորտում որպես հիմնախնդիրներ են մնում հանրակրթական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման և նյութատեխնիկական բազայի նորացման ու արդիականացման խնդիրները:

Ժամանակն է պետական կրթական առանձին քաղաքականություն իրականացնել գյուղական դպրոցի նկատմամբ, հնարավորություն ստեղծել լուծելու այն կարևորագույն, առաջնահերթ խնդիրները, որոնք տեղերում խոչընդոտում են այդ դպրոցների գործունեության բարելավման գործընթացը: Ժողովրդագրական բացասական միտումների հետ կապված բավականին լուրջ հիմնախնդիր է դարձել մարզի սահմանամերձ, լեռնային սակավաթիվ բնակչությամբ համայնքներում գյուղական դպրոցի պահպանության խնդիրը: Առկա միտումների պահպանման դեպքում առանձին համայնքներ կկանգնեն դպրոցների փակման վտանգի առջև, ինչն իր հերթին զգալի բացասական ազդեցություն կունենա գյուղապահպանության խնդրին:

## 4.2. ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

### 4.2.1 Քաղաքականության վերլուծություն

2013թ. ընթացքում մշակույթի, սպորտի և երիտասարդության բնագավառում մարզպետարանի գործունեությունը նպատակաուղղվել է մարզում պետական մշակութային քաղաքականության իրականացմանը, մշակույթի դերի բարձրացմանը, պետական, ազգային և այլ տոների, ազգային ծեսերի ու ծիսակարարությունների վերականգնմանն ու տարածմանը, մշակութային ժառանգության պահպանությանը, զանգվածային միջոցառումների կազմակերպմանը, կադրային քաղաքականության և մշակութային կրթության զարգացմանը, երիտասարդության հետ տարվող աշխատանքների աջակցմանն ու ակտիվացմանը:

2013 թվականին մարզի գյուղական և քաղաքային համայնքներում կազմակերպվել և իրականացվել են ազգային, պետական տոներին նվիրված միջոցառումներ, հոբելյաններ, փառատոններ, ցուցահանդեսներ, տոնախմբություններ, գիտաժողովներ, համերգային և թատերական ծրագրեր, սպորտային մրցումներ, հուշամրցաշարեր, առաջնություններ:

### 4.2.2 Իրականացման առաջընթացը

Մշակութային միջոցառումների իրականացման նպատակով 2013թ. պետական բյուջեով ՀՀ Սյունիքի մարզպետարանին հատկացված 7,171 մլն դրամ գումարից ծախսվել է 4,2մլն դրամ: Տարվա ընթացքում բազմաթիվ մշակութային և սպորտային միջոցառումներ իրականացվել են նաև համայնքային և այլ դոնոր կազմակերպությունների ֆինանսական միջոցների հաշվին:

Հաշվետու ժամանակահատվածում անհրաժեշտ աշխատանքներ են իրականացվել մարզի մշակութային և սպորտային, երաժշտական կրթական հաստատությունների աշխատանքների կազմակերպման, մշակութային և սպորտային կառույցների վերանորոգման, անհրաժեշտ գույքի և սարքավորումների ձեռքբերման ուղղությամբ:

2013 թվականին իրականացվել են շուրջ 50.47 մլն դրամի շինվերանորոգման աշխատանքներ, այդ թվում՝ Ագարակի արվեստի դպրոցի վերանորոգում - 19.38 մլն դրամ, Լորի Հ. Սահյանի տուն թանգարանի վերանորոգում – 25.22 դրամ, Բակունցի տուն թանգարանի նորոգում 5.87 մլն դրամ գումարի շրջանակներում:

2013թ պետական բյուջեից հատկացված 19.0 մլն դրամ գումարի շրջանակներում <<Կապանի մշակույթի կենտրոն>> ՊՈԱԿ-ը, Կապան, Գորիս, Մեղրի, Ագարակ քաղաքային համայնքների և Խնձորեսկ գյուղական համայնքի մշակույթի պալատները ապահովվել են նոր գույքով և սարքավորումներով :

Աղյուսակ 2. Մշակույթի, սպորտի և երիտասարդության ոլորտի 2013թ. արդյունքային ցուցանիշները.

| Միջոցառման անվանումը | Արդյունքային ցուցանիշը | Թիրախ | 2013թ.փաստացի |
|---|---|---|---|
| Մշակույթի և մարզական հաստատությունների շենքերի հիմնանորոգում և նյութատեխնիկական բազայի բարելավում | Հիմնանորոգվող մշակութային օբյեկտների թիվը<br>Ներդրումների չափը | 4<br><br>142.5 մլն դրամ | 3<br><br>69.47 մլն դրամ |
| Մշակութային և սպորտային միջոցառումների կազմակերպում | Մարզային մշակութային միջոցառումների կազմակերպում | 7.2 մլն դրամ | 4.2 մլն դրամ |

### 4.2.3 Խնդիրները

Չնայած իրականացված աշխատանքներին դեռևս շարունակում են հրատապ մնալ մարզի մշակույթի և սպորտային հաստատությունների վերանորոգման և համապատասխան գույքով ապահովման, ջեռուցման համակարգերի ներդրման հարցերը:

### 4.2.4 Քաղած դասերը և հետագա քայլերը

Հաշվետու ժամանակահատվածում մարզի գյուղական և քաղաքային համայնքներում կազմակերպված մշակութային և սպորտային միջոցառումները էական ազդեցություն են թողել մարզի բնակչության գեղագիտական դաստիարակության, ազատ ժամանցի կազմակերպման, մատաղ սերնդի հոգևոր դաստիարակության վրա:

2013 թվականի ընթացքում կարևորվել է կազմակերպվող միջոցառումներին բնակչության ակտիվ մասնակցությունը, մասսայական, մշակութային և սպորտային միջոցառումների կազմակերպումը և հոգևոր մշակութային կրթության ուղղությամբ աշխատանքների ակտիվացումը:

2013 թվականի ընթացքում մշակույթի, սպորտի և երիտասարդության բնագավառում մարզպետարանի գործունեությունը նպատակաուղղվել է մարզում պետական մշակութային քաղաքականության իրականացմանը, մշակույթի դերի բարձրացմանը, պետական, ազգային և այլ տոների, ազգային ծեսերի ու ծիսակարարությունների վերականգնմանն ու տարածմանը, մշակութային ժառանգության պահպանությանը, զանգվածային միջոցառումների կազմակերպմանը, կադրային քաղաքականության և մշակութային կրթության զարգացմանը, երիտասարդության հետ տարվող աշխատանքների աջակցմանն ու ակտիվացմանը:

2013թ. ընթացքում մարզի գյուղական և քաղաքային համայնքներում կազմակերպվել և իրականացվել են ազգային, պետական տոներին նվիրված միջոցառումներ, հոբելյաններ, փառատոններ, ցուցահանդեսներ, տոնախմբություններ, գիտաժողովներ, համերգային և թատերական ծրագրեր, սպորտային մրցումներ, հուշամրցաշարեր, առաջնություններ:

## 4.3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

### 4.3.1 Քաղաքականության վերլուծություն

2013թ. տարեկան աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումները ընդգրկում են՝ մարզի տարածաշրջաններում գործող առողջապահական կառույցների համաչափ զարգացումը, բնագավառում ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործումը, առողջության առաջնային պահպանման, մոր և մանկան առողջության, հիվանդանոցային և շտապ օգնության ծառայությունների որակի ու մատչելիության բարձրացումը: Հաշվետու ժամանակահատվածում կարևորվորվել են համակարգի ֆինանսավորման մեխանիզմների, գյուղական բնակչության բուժօգնության, հիվանդանոցային համակարգում պետական միջոցների արդյունավետ օգտագործման, մոր և մանկան առողջության պահպանման, իմունոկանխարգելման և վերարտադրողական առողջության բնագավառներում իրականացված գործառույթների որակի և լիարժեքության ապահովումը: Առանձնակի ուշադրություն է դարձվել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, բրուցելյոզի, տուբերկուլոզի, մալարիայի և այլ տարափոխիկ հիվանդությունների կանխարգելման ուղղություններին ու նրանց հակազդելուն ուղղված ազգային ծրագրերում մշակված միջոցառումների իրականացմանը:

ԱԱՊ օղակում 2013 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ արտահիվանդանոցային բուժօգնության որակի նոր ցուցանիշների ներդրումը, բնակչությանը անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերով ապահովման գործընթացի բարելավումը, ԱԱՊ իրականացնող բժշկի մոտ գրանցման գործընթացը արդիականացումը:

2013թ. ընթացքում շարունակվել է նեոնատալ և մանկական հիվանդանոցային, բուժօգնության արդիականացումը:

ՀՀ առողջապահության նախարարության ԾԻԳ-ի կողմից վարկային ծրագրի շրջանակներում արդեն մեկնարկել է <<Կապանի ԲԿ>> ՓԲԸ թերապևտիկ մասնաշենքի վերակառուցումը և <<Մեղրու տարածաշրջանային ԲԿ>> ՓԲԸ նոր մասնաշենքի կառուցումը, ավարտվել է <<ԶՊՄԿ>> ՓԲԸ-ի միջոցներով <<Քաջարանի ԲԿ>> ՓԲԸ արդիականացումը:

Միջազգային կազմակերպությունների, բարեգործական հիմնադրամների կողմից մեկնարկել են մի շարք ներդրումային աշխատանքներ, հատկապես գյուղական ԱԱՊ կենտրոններում, որոնք ուղղված են վերջիններիս նյութատեխնիկական ռեսուրսների բարելավմանը, ինչը կապահովի մարզում գործող առողջապահական ընկերությունների համաչափ զարգացումը:

Կադրային ռեսուրսների բարելավման, հատկապես մասնագետների հետբուհական շարունակական կրթման նպատակով իրականացվել են նաև մի շարք կրթական և ուսուցողական ծրագրեր միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված միջոցներով: Մասնավորապես <<Վորլդ Վիժն Հայաստան>> ԲԿ կողմից իրականացվել են դասընթացներ ԲՄԿ-ում աշխատող բուժքույրերի համար՝ պետական պատվերի շրջանակներում ԲՄԿ-ում մատուցվող ծառայությունների վերաբերյալ: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից կազմակերպվել են դասընթացներ առողջության առաջնային պահպանման օղակում ծառայություններ մատուցող բժիշկների և բուժքույրերի համար՝ <<Վաղ տարիքի երեխաների սնուցում>> թեմայով:

<<Տուբերկուլոզի դեմ պայքարի>> պետական նպատակային ծրագրի շրջանակներում շարունակվել է ԱԱՊ ոլորտում գործող բժիշկների և բուժքույրերի կրթումը:

Բժշկական համալսարանի 6 շրջանավարտ մարզպետի միջնորդությամբ շարունակում են ուսուցումը կլինիկական օրդինատուրայում պետական պատվերի շրջանակներում՝ հետագայում մարզում 5 տարի աշխատելու պայմանով:

### 4.3.2 Իրականացման առաջընթացը

2013թ. թվականին իրագործելով ՀՀ կառավարության կողմից մշակված քաղաքականության դրույթները ՀՀ Սյունիքի մարզի առողջապահական համակարգի գործունեության արդյունքում տեղի է ունեցել բժշկական արդյունավետության որոշակի բարձրացում, մասնավորապես իրականացվել են հետևյալ միջոցառումները.

Բժշկական օգնության որակի և մատչելիության բարելավում

ա/ Արտահիվանդանոցային բուժօգնության գծով.

1. Մեկնարկել է ԱԱՊ ոլորտում մատուցված ծառայությունների որակը ապահովող նոր ցուցանիշների ներդրման գործընթացը, բարձրացել է ընտանեկան բժշկների որակյալ ծառայություններից օգտվող /82%/, սկրինինգային ծրագրերի մեջ ընդգրկված բնակչության տեսակարար կշիռը, ավելացել է նորածինների կրծքով սնուցման ընդգրկվածությունը, շտկվել են իմունոկանխարգելման գործընթացի բացթողումները, 100% ապահովվել է առողջ երեխայի վարման ծավալը, ապահովվել է ՄՀԻՎ 100%-ով:
2. Բարձրացել է դիսպանսերային և նեղ մասնագիտական արտահիվանդանոցային բուժօգնության որակն ու մատչելիությունը՝ աճել է ներզատաբանական, ուռուցքաբանական, սրտաբանական հիվանդությունների վաղ հայտնաբերված դեպքերի տեսակարար կշիռը: Շարունակվել է մարզային շրջիկ խմբում ընդգրկված նեղ մասնագիտական որակավորում ունեցող բժշկների այցելությունները տարածաշրջաններ և գյուղական համայնքներ՝ դրանով իսկ նպաստելով գյուղական բնակչությանը նեղ մասնագիտական բուժօգնության մեջ ընդգրկվելուն, առանձնակի շեշտադրվել է ոչ տարափոխիկ տարածված հիվանդությունների բարդությունների կանխարգելման և հղիների նախածննդյան հսկողության մեջ վաղ ընդգրկման գործընթացը:
3. Ներդրվել են անվճար և արտոնյալ պայմաններում դեղորայքի ապահովման և հաշվետվությունների ներկայացման նոր մոդելներ և ձևեր: Մարզում ստեղծվել է աշխատանքային խումբը, որը պարբերաբար ուսումնասիրել է նշված գործընթացում առկա խնդիրները:
4. Բարձրացել է գյուղական համայնքներում լաբորատոր-ախտորոշիչ արտագնա այցելությունների թիվը:

բ/ Հիվանդանոցային բուժօգնության գծով.

1. Իրականացվել է մոր և մանկան առողջության ծառայությունների բարելավում, որի արդյունքում հաշվետու ժամանակաշրջանում բացառվել է մայրական մահացությունը: Իրականացվել է մանկական և պերինատալ մահացության բոլոր դեպքերի վերլուծություն՝ ուսումնասիրվել են պատճառները և մշակվել է վերջինիս նվազեցմանն ուղղված միջոցառումների ծրագիր:
2.Նշված ժամանակահատվածում մոնիտորինգի է ենթարկվել երեխաներին հիվանդանոցային բուժօգնության ուղեգրման հիմնավորվածությունը, ձեռնարկվել են միջոցներ երեխաներին չհիմնավորված ստացիոնար բուժման ուղեգրման դեպքերի բացառման ուղղությամբ:
3.Հիվանդանոցային բուժօգնության որակի բարելավման նպատակով ՀՀ Սյունիքի մարզպետի որոշմամբ ստեղծվել է հանձնաժողով, որի մեջ ընդգրկվել են նաև միջազգային բարեգործական կազմակերպությունների ներկայացուցիչները:

գ/ Մարզում շտապ օգնության ծառայության բարելավման գծով.

1. Մոնիտորինգի է ենթարկվել շտապ օգնության ծառայության կողմից իրականացված բուժօգնության համապատասխանելիությունը ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված գործելակերպին:
2. Իրականացվել են մի շարք միջոցառումներ, ուղղված շտապ օգնության ծառայության կադրային հագեցվածության բարելավմանը:

Բժշկական հաստատությունների նյութատեխնիկական ռեսուրսների բարելավման գծով.

1. Շարունակվում է բուժհաստատությունների շենքային պայմանների բարելավումը՝ ընթացքի մեջ է <<Կապանի ԲԿ>> ՓԲԸ թերապևտիկ մասնաշենքի վերակառուցման աշխատանքները, որը իրականացվում է ՀԲ վարկային ծրագրի շրջանակներում: Ավարտվել է <<Քաջարանի ԲԿ>> ՓԲԸ պոլիկլինիկական մասնաշենքերի վերակառուցումը և հագեցումը արդի սարքավորումներով, որը իրականացվել է է <<ԶՊՄԿ>> ընկերության կողմից: Ավարտվել են <<Մեղրու տարածաշրջանային ԲԿ>>ՓԲԸ նոր համալիրի նախագծային-նախահաշվարկային աշխատանքները:

2. Շարունակվում է մարզի բուժհաստատությունների կադրային ռեսուրսների բարելավումը: Բժիշկների հետբուհական շարունակական կրթման նպատակով իրականացվել են նաև մի շարք կրթական և ուսուցողական ծրագրեր միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված միջոցներով՝ մասնավորապես <<Վորլդ Վիժն Հայաստան>> ԲԿ կողմից իրականացվել են դասընթացներ ԲՄԿ-ում աշխատող բուժքույրերի համար՝ պետական պատվերի շրջանակներում ԲՄԿ-ում մատուցվող ծառայությունների վերաբերյալ; ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից կազմակերպվել են դասընթացներ առողջության առաջնային պահպանման օղակում ծառայություններ մատուցող բժիշկների և բուժքույրերի համար՝ <<Վաղ տարիքի երեխաների սնուցում>> թեմայով:

<<Տուբերկուլոզի դեմ պայքարի>> պետական նպատակային ծրագրի շրջանակներում շարունակվել է ԱԱՊ ոլորտում գործող բժիշկների և բուժքույրերի կրթումը:

Պետական պատվերի շրջանակներում կլինիկական օրդինատուրայի միջոցով 2013 թվականին իրենց ուսուցումը շարունակել են բժշկական համալսարանի 6 շրջանավարտ:

ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ Սյունիքի մարզպետարանի համագործակցության արդյունքում ժամանակավոր մարզ է գործուղվել վիրաբույժ, մանկաբարձ-գինեկոլոգ, անեստեզիոլոգ: ՀՀ Սյունիքի մարզպետարանի ինտերնետային կայքում տեղադրվել է բժիշկ-մասնագետների թափուր հաստիքների բազան, որը պարբերաբար թարմացվում է:

Աղյուսակ 3 Առողջապահության ոլորտի արդյունքային ցուցանիշները.

| Ռազմավարական նպատակներ և առաջնահերթ ծրագրեր | Ցուցանիշներ | Թիրախ | 2013 թ. փաստացի |
|---|---|---|---|
| **Ռազմավարական նպատակ 1 Բժշկական ծառայությունների որակի և մատչելիության բարձրացում** | | | |
| **Ծրագիր** 1<br>***Արտահիվանդանոցային բ.օգ. որակի բարելավում***<br>1.1Մարզում առողջության առաջնային պահպանման որակի և մատչելիության բարձրացում՝ ամբողջ մարզի տարածքում ընտանեկան բժշկի ինստիտուտի կայացում | • Ընտանեկան բժիշկների որակյալ ծառայություններից օգտվող բնակչության տեսակարար կշիռը | 85% | 81% |
| | • ազգային օրացույցի ըստ տարիքի ազգաբնակչության ընդգրկվածությունը պատվաստումներում | /92-95%/ | 93% |
| | • սկրինինգային ծրագրերի՝ /զարկերակային ճնշման չափում, կրծքագեղձի, արգանդի վզիկի, շականակագեղձի քաղցկեղ վաղ հայտնաբերում/ ազգաբնակչության ընդգրկվածությունը ըստ տարիքի | /88-92%/ | 86% |
| | • առողջ երեխային վարման ծավալի ապահովում/100%/ | /100%/ | /100%/ |
| | • ՄՀԻՎ ապահովում ամբուլատոր պայմաններում /100%/ | /100%/ | /100%/ |
| | • նորածինների կրծքով սնուցման ընդգրկվածություն | /90%/ | /100%/ |
| | • Ընտանեկան բժշկի կողմից առողջ ապրելակերպի քարոզչություն | /100%/ | /100%/ |

| | | | |
|---|---|---|---|
| 1. 2 Արտահիվանդանոցային դիսպանսերային և նեղ մասնագիտական բուժօգնության որակի և մատչելիության բարձրացում /էնդոկրինոլոգիական, ինֆեկցիոն, հոգեբուժական, սրտաբանական, տուբերկուլյոզային, մաշկավեներաբանական, արյունաբանական, մանկաբարձգինեկոլոգիական/ ամբողջովին ընդգրկելով մարզի տարածքի գյուղական և քաղաքային համայնքներում բնակվող բնակչությանը | ա/էնդոկրինոլոգիական ծառայության գծով՝ կոմպենսացված վիճակով հոսպիտալիզացիայի ցուցանիշի նվազում դիաբետով հաշվառված հիվանդների առաջնակի հաշմանդամության մակարդակի իջեցում, գլյուկոմետրիայի կատարման մակարդակի ավելացում | /K=0/,/ | K=0 |
| | բ/ուռուցքաբանական՝ վաղ հայտնաբերված հիվանդների թիվը ընդհանուրի մեջ | /50-60%/ | 42.5% |
| | գ/ սրտաբանական ծառայությունների գծով՝ բարդություններով հոսպիտալիզացված հիվանդների թիվը հաշվառված հիվանդների թվին | /K=0/ | K=0 |
| | դ/գյուղերում և քաղաքներում դիսպանսերային սպասարկման մեջ ընդգրկված բնակչության համաչափ տեսակարար կշիռ | 50/50% | 45.5/55.5 % |
| | ե/հղիների վաղ ընդգրկման , սեռավարակների նկատմամբ հղիների հետազոտման, վաղաժամ ծննդաբերության բացառման, հետծննդյան շրջանում ծննդկանների ընդգրկման, կանանց կոնսուլտացիայի կողմից | 100%/ 100%/100 %/100% | 70%/100%/ 85%/97.5% |
| | • Պապ-տեսթի մեջ կանանց ընդգրկվածության, | 95-100% | 60% |
| | • 15 տարեկան աղջիկների զարգացման գնահատման ընդգրկվածության, սկրիինգային ցուցանիշներ բարձրացում/ | 100% | 92% |
| 1. 3 Անվճար և արտոնյալ պայմաններում դեղորայքով ապահովման գործընթացի որակի և մատչելիության բարձրացում | • անվճար և արտոնյալ պայմաններում դեղորայքով ապահովվող ազգաբնակչության շրջանում մերժված դեպքերի նվազում | 0% | 8% |
| | • տրամադրված դեղորայքի ամբողջականության և նպատակային հասցեագրվածության տեսակարար կշիռը | 90 % | 68% |
| 1.4 Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների որակի և մատչելիության բարձրացում մարզի ամբողջ բնակչության համար<br><br>***Առաջնահերթ միջոցառումներ***<br>Արտահիվանդանոցային բուժ. օգնության գծով մատուցված ծառայությունների որակի ապահովում, որակը բնորոշող նոր ցուցանիշների ներդրում | • ա/ ախտորոշման համար Երևան ուղեգրված հիվանդների տեսակարար կշիռը հետազոտված հիվանդների ընդհանուր թվի մեջ | ոչ ավելին քան 10 % | 4% |
| | • բ/ գյուղական համայնքներում արտագնա ախտորոշիչ այցելությունների հաճախականության բարձրացում | Տարեկան 4 անգամ | Տարեկան 1 անգամ |
| | • Ծրագրի իրականացման համար կպահանջվի 850.0 մլն. դրամ | | |

**Ծրագիր** 2
Հիվանդանոցային /երկրորդ մակարդակի/ ծառայությունների որակի և մատչելիության բարձրացում

| | | | |
|---|---|---|---|
| 2.1. մոր և մանկան առողջության պահպանման ծառայությունների բարելավում | ա/ պերինատալ մահացության ցուցանիշի նվազում. Կապանի և Սիսիանի, Մեղրու տարածաշրջան. ԲԿ-ներում/,<br>բ/ մայրական մահացության բացակայություն<br>գ/ մանկական մահացության ցուցանիշի նվազում / | մինչև 10 պր<br>0<br>մինչև 7.0պր | 12.5պր<br>0<br>9.6պր |
| 2.2 երկրորդ մակարդակի հիվանդանոցային ծառայության որակի և մատչելիության բարելավում | ա/ հիվանդանոցային մահաբերության ցուցանիշի նվազում<br>բ/ հիվանդի բուժման միջին տևողության նվազում/ մահճ.-օր/<br>գ/ վիրաբուժական գործունեության ակտիվության բարձրացում%<br>դ/պլանային և անհետաձգելի վիրաբուժության համաչափ զարգացում<br>ե/ հետվիրահատական բարդությունների նվազում %<br>զ/ կլինիկական և ախտաբանաանատոմիական ախտորոշումների չհամընկնելու հաճախականության նվազում %<br>է/ սուր սիրտանոթային ախտորոշմամբ հիվանդների առաջնակի հաշմանդամության և մահացության ցուցանիշի նվազում<br>թ/ օնկոլոգիական ախտորոշումով հիվանդների պարբերական բուժման արդյունավետության բարձրացում / 5-ամյա ապրելիության ցուցանիշի բարձրացում/:<br>ժ/ներհիվանդանոցային վարակի բացակայություն | 0.7%<br>6.4<br>17%<br>60/40<br>100%<br>0 | 0.9%<br>6.9<br>12.8<br>50/50<br>89%<br>0 |
| 2.3 շտապ օգնության ծառայությունների բարելավում<br><br>***Առաջնահերթ միջոցառումներ***<br>Հիվանդանոցային բուժ. օգնության գծով մատուցված ծառայությունների որակի ապահովում | ա/առավելագույն ժամկետը /30 րոպից ավելին՝ կանչը ստանալու և սպասարկելու մեջ ընկած ժամանակահատված/ գերազանցող կանչերի թվի բացառում<br>բ/ սպասարկված մասնագիտացված կանչերի տեսակարար կշիռը բարձրացում<br>գ/ կրկնակի կանչերի տեսակարար կշռի նվազում<br>• Ծրագրի իրականացման համար կպահանջվի 800.0 մլն. դրամ,այդ թվում <<Մոր և մանկան առողջության պահպանում>> ծրագրի իրականացման համար՝170.0 մլն.դրամ | 0%<br>80% | 5%<br>50% |
| **Ռազմավարական նպատակ 2** | **Բժշկական հաստատությունների ռեսուրսների բարելավում** | | |
| **Ծրագիր 1**<br>Բուժ. հաստատությունների շենքային պայմանների բարելավում | ա/<<Կապանի ԲԿ>>թերապևտիկ մասնաշենքի վերակառուցում,<br>բ/<<Մեղրու տարածաշրջանային ԲԿ>>նոր մասնաշենքի կառուցում/համաշխարհային / ՀԲ վարկային ծրագրով/ | Ընթացքի մեջ է | Ընթացքի մեջ է<br>Ընթացքի մեջ է |

| | | | |
|---|---|---|---|
| ***Առաջնահերթ միջոցառումներ***<br>ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից հսկողության իրականացում ժամանակացույցի շեղումները բացառելու նպատակով | գ/<<Սիսիանի ԲԿ>> պոլիկլինիկական մասնաշենքի վերակառուցման ավարտ/<br>16.0 մլն. դրամ/<br><br>դ/ <<Գորիսի ԲԿ>>դիարանի կառուցում,<br><br>տուբերկուլյոզային բաժանմունքի վերանորոգում /<br>70.0 մլն.դրամ/ | | Չի իրականացվել<br><br>Ավարտված է<br>Չի իրականացվել |
| **Ծրագիր 2**<br>Բուժհաստատությունների տեխնիկական ռեսուրսների բարելավում<br><br>***Առաջնահերթ միջոցառումներ***<br>Սարքավորումների հասցեական բաշխման նկատմամբ հսկողության սահմանում | ա/ բժշկական կենտրոնների նորածնային և մանկական բաժանմունքների հագեցում ժամանակակից սարքավորումներով<br>բ/ԱԱՊԿ հագեցում անհրաժեշտ միջոցներով որակի նոր ցուցանիշների ներդրման գործընթացը ապահովելու նպատակով<br><br>գ/<<Քաջարանի ԲԿ>> հագեցում նորագույն սարքավորումներով/ 100.0 մլն դրամ/ | | Ավարտված է<br><br>Չի իրականացվել<br><br>Ավարտված է |
| **Ծրագիր 3**<br>Բուժհաստատությունների կադրային ռեսուրսների բարելավում<br><br>***Առաջնահերթ միջոցառումներ***<br><br>ՀՀ առողջապահության նախարարության կողմից ուղեգրված մասնագետների կենցաղային պայմանների ապահովման նկատմամբ հսկողության սահմանում: | ա/Նեղ մասնագիտակա հետդիպլոմային նպատակային կրթում պետական պատվերի շրջանակներում<br>բ/ԱԱՊ ոլորտի բժիշկների, միջին բուժանձնակազմի շարունակական կրթում <<Տուբերկուլոզի դեմ պայքարի>>, Մալարիա, ՄԻԱՎ-ի ազգային ծրագրի շրջանակներում և ոչտարափոխիկ հիվանդությունների կանխարգելում թեմաներով բնակչության կրթում<br>Բարձր որակավորում ունեցող բժշկների թափուր հաստիքների նվազում | 20<br><br>Իրականացվել է | 8<br><br>Իրականացվել է |

### 4.3.3 Խնդիրները

Բժշկական արդյունավետության բարձրացման կարևոր բաղադրիչներից մեկը արտահիվանդանոցային բուժօգնության բարելավումն է: Ընտանեկան բժշկության ինստիտուտի ներդրումը մարզում դեռևս չի իրականացվել ամբողջովին, որը

պայմանավորված է, հիմնականում Կապանի ԲԿ ԱԱՊ ոլորտի բժշկների տարիքային առանձնահատկությամբ /միջին տարիքը-60/ և մասնագիտացման դասընթացների անմատչելիության /վայրը և տևողությունը/ պատճառով:

ԱԱՊ ոլորտում կանխարգելիչ սկրինինգների ցուցանիշները բարձրացնելու և ընդլայնելու ինչպես նաև նեղ մասնագիտական և դիսպանսերային բուժօգնության մեջ ընդգրկվածության, որակի ցուցանիշների ապահովման համար անհրաժեշտ է գյուղական համայնքներում իրականացնել մատուցվող ծառայությունների բարելավում հաշվի առնել ՀՀ Սյունիքի մարզի առանձնահատկությունները (բարձր լեռնային պայմանները, համայնքների միջև ընկած տարածությունը, գյուղական վայրերում ապրողների թիվը, սեռը, տարիքը և այլն):

Անվճար և արտոնյալ պայմաններում դեղորայքով ապահովման գործընթացի թիրախային ցուցանիշը մասամբ ապահովվել է, սակայն այս գործընթացի որակը ապահովելու համար անհրաժեշտ է տրամադրվող դեղորայքի ցանկը վերանայել, ընդգրկելով արդի խմբերի դեղորայք:

Հիվանդանոցային բուժօգնության որակի բարելավման առումով անհրաժեշտ է նվազեցնել մանկական, պերինատալ մահացության և հիվանդանոցային մահաբերության ցուցանիշները, համաչափ զարգացնել պլանային և անհետաձգելի վիրաբուժությունը:

Դեռ լուծված չէ բժշկական հաստատությունների մի շարք ծառայությունների կադրային հագեցվածության խնդիրը:

### 4.3.4 Քաղած դասերը և հետագա քայլերը

Ոլորտի առջև ծառացած խնդիրների լուծումը հրատապ է և պահանջում է.

1.<<Կապանի ԲԿ>> տեղամասային սկզբունքով աշխատող թերապևտների և մանկաբույժների համար <<ընտանեկան բժշկություն>> մասնագիտացման դասընթացները իրականացնել անհատական ծրագրով առանց հիմնական աշխատանքային գործընթացի ընդհատման:

2.Գյուղական ազգաբնակչության նեղ մասնագիտական բուժօգնության և լաբորատոր-գործիքային հետազոտությունների մատչելիության, ինչպես նաև ԱԱՊ ոլորտում որակի ցուցանիշները ապահովելու համար, անհրաժեշտ է կազմել այցելությունների ժամանակացույց՝ հաստատված հիմնադրի կողմից և գործընթացի նկատմամբ իրականացնել շարունակական մշտադիտարկում: Գործընթացը էլ ավելի արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է նաև գյուղական ԱԱՊԿ ապահովել անհրաժեշտ սարքավորումներով:

3.Անվճար և արտոնյալ պայմաններում դեղորայքով ապահովման գործընթացի ցանկը ընդլայնելու համար անհրաժեշտ է իրականացնել համագործակցություն այն համայնքների հետ, որոնք բժշկական ծրագրեր իրականացնելու համար նախատեսել են ֆինանսական միջոցներ: Բացի այդ, ընկերությունների կողմից այդ գործընթացը էլ ավելի արդյունավետ դարձնելու նպատակով, անհրաժեշտ է արդիականացնել հիվանդների հաշվառման և անհրաժեշտ դեղորայքի պահանջարկի ու հաշվառմա հաշվետվություններ ներկայացնելու գործընթացը

5. Մանկական և պերինատալ մահացության ցուցանիշի նվազեցման համար անհրաժեշտ է բացառել այն հանգամանքները, որոնք նպաստում են մանկական և պերինատալ մահացությանը՝ այլ տարածքներից (Քաջարանի շրջան) բարձր ռիսկի խմբերի հղիների նկատմամբ սահմանել հսկողություն, իրականացնել մարզի առաջատար մասնագետների կողմից անհրաժեշտ խորհրդատվություն:

6.Անհրաժեշտ է իրականացնել արդի կադրային քաղաքականություն՝ այն է պետական պատվերի շրջանակներում միջնորդագիր տրամադրել միայն այն մասնագիտությունների գծով, որոնք մարզի համար ունեն հրատապ նշանակություն՝ շտապ օգնության, նեոնատալ, մանկական անեստեզիոլոգիա և ռեանիմատոլոգիա, ակնաբուժություն, էնդոկրինոլոգիա ծառայությունների գծով: Միաժամանակ անհրաժեշտ է մարզում բժշկական կադրերի աշխատանքը դարձնել հրապուրիչ՝ ապահովել նորավարտ բժիշկներին բնակարանային պայմաններով, բարձր աշխատավարձով:

## 4.4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

### 4.4.1 Քաղաքականության վերլուծություն

2013թ. մարզի զարգացման գերակա նպատակներից է սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը: Այն կարող է իրագործվել սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկման բարձրացման, սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության միջոցառումների ընդլայնման, այդ կապակցությամբ սոցիալական ծառայություններ մատուցող պետական և ոչ պետական կառույցների համագործակցության, սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստման, սոցիալական ծառայության գործակալությունների նյութատեխնիկական բազայի բարելավման, ինչպես նաև սոցիալական ծառայությունների համակարգի կառավարման բարելավման միջոցով: Կարևոր է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման միասնական համակարգի կառուցվածքագործառութային մոդելի շրջանակներում միասնական ընդունարանների ստեղծումը:

Մարզում կապիտալի պակասի և ներդրումների ցածր մակարդակի արդյունք հանդիսացող գործազրկության պայմաններում տարբեր ոլորտների միասնական քաղաքականության իրականացմամբ է պայմանավորված զբաղվածության հիմնախնդիրների լուծման արդյունավետության բարձրացումը և գործազրկության նվազեցումը: Կարևոր է բնակչության արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծումը և գործազուրկների մրցակցությունը բարձրացնելու նպատակով մասնագիտական ուսուցման ծրագրերի քանակի ավելացումը:

Հաշմանդամներին մատուցվող ծառայությունների բնագավառում ծառայությունների տրամադրումը ուղղված է հաշմանդամների վերականգնման և պրոթեզաօրթոպեդիկ օգնության ու ծառայությունների մատուցման կազմակերպման բարելավմանը, որը կնպաստի հասարակության մեջ նրանց ինտեգրմանը: Վերականգնման արդյունքում նրանք հնարավորություն ունեն աշխատելու՝ մասամբ հոգալու իրենց, ինչպես նաև՝ իրենց ընտանիքի սոցիալական խնդիրները, որն այսօր մեր երկրի սոցիալական քաղաքականության և աղքատության հաղթահարման ծրագրի, ինչպես նաև <<Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին>> ՀՀ օրենքի և <<Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015 թթ. ռազմավարության>> պահանջներից է:

Մարզի համար սոցիալական և երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում կարևորվում է սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության ծառայությունների ընդլայնումը:

Նշված միջոցառումների իրականացման համար ակնկալվում է պետության և դոնոր կազմակերպությունների աջակցությունը:

### 4.4.2 Իրականացման առաջընթացը

Խոցելի ընտանիքներին աջակցության ոլորտում մարզում շարունակվել է անապահով խավի անվճար սննդապահովման ծրագրի իրականացումը:

<<Առաքելություն Հայաստան>> հասարակական բարեգործական կազմակերպության ֆինանսավորմամբ մարզում գործում է 2 բարեգործական ճաշարան, որտեղ 250 հոգի օրական մեկ անգամ ստանում են տաք սնունդ:

Մարզում զբաղվածության ոլորտի հիմնական խնդիրը եղել է զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի իրականացումը, որոնք ուղղված էին բնակչության արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծմանը:

2013թ. մարզում ստեղծվել է 458 նոր աշխատատեղեր, որոնցից 245-ը գործող ձեռնարկություններում:

Զբաղվածության 4 տարածքային կենտրոններում գրանցված 7017 աշխատանք փնտրող քաղաքացիներից 4012 ունեցել են գործազուրկի կարգավիճակ, որոնցից 513 ստացել են գործազրկության նպաստ՝ 18000 դրամի չափով:

Սյունիքի մարզպետարանի աջակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունը 2013թ հոկտեմբերի 11-ին կազմակերպել է աշխատանքի տոնավաճառ, որտեղ գործատուների կողմից առաջարկվել է 249 աշխատատեղ: Տոնավաճառի ընթացքում աշխատանքի են տեղավորվել 118 աշխատանք փնտրող քաղաքացիներ: Ներկա պայմաններում միայն տարբեր ոլորտների միասնական քաղաքականության իրականացմամբ է հնարավոր ապահովել զբաղվածության հիմնախնդիրների լուծման արդյունավետության բարձրացումը և գործազրկության նվազեցումը:

Տարեցներին մատուցվող ծառայությունների բնագավառում ծառայությունների տրամադրումը ուղղված է տարեցների սոցիալական սպասարկման և խնամքի ծառայությունների տրամադրմանը: Վերջին տարիներին այս բնագավառում պետության կողմից իրականացվող քաղաքականությունն ուղղված է տարեցների, և հատկապես միայնակ և հաշմանդամ տարեցների կյանքի պայմանների բարելավմանը: Արծվանիկ գյուղում գտնվող տարեցների սպասարկման կենտրոնում խնամվում են 10 շահառուներ:

Հաշմանդամներին հասարակության մեջ ինտեգրման գործընթացը ապահովելու համար մարզային հանձնաժողովի կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ներկայացվել հաշմանդամների սոցիալական պաշտպանության վերաբերյալ ծրագրային առաջարկներ 2013թ. տարեկան ծրագրերում ընդգրկելու նպատակով:

Սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բնագավառը կատարելագործելու նպատակով մարզի 4 քաղաքներում ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման միասնական համակարգի կառուցվածքագործառութային մոդելի շրջանակներում միասնական ընդունարանների ստեղծման համար առաջարկվել են տարածքներ:

Սոցիալական ծառայությունների և ծրագրերի վերաբերյալ հասարակության իրազեկման ոլորտում սոցիալական աջակցության բնագավառում ընթացող ծրագրերի և դրանցում ընդգրկվելու չափանիշների վերաբերյալ հեռարձակվել է 13 հեռուստահաղորդում, որոնք նվիրված են եղել պետական նպաստների, զբաղվածության, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական